ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ԳՀԱՊՁԲ-22-3/3-6 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 11 .04.2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՄԱՅՆԴ ԼԱԲ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Իսաղուլյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 02.03.2022թ. կնքված №ԳՀԱՊՁԲ-22-3/3-6 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի №1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի №1Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 1 380 500 (մեկ միլիոն երեք հարյուր ութսուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՄԱՅՆԴ ԼԱԲ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ.ք.Աբովյան, Դարանի փ.,8շ., բն.20
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ,
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570072522890100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 03557227
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Ա. ԻՍԱՂՈՒԼՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-22-3/3-6 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	չ/մ	Քանակը	Մեկ միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Ապրանքի մատակարարումը 2022թ., Ըստ եռամսյակների
						2-րդ եռամսյակ
1(16)	Դրոշներ (ՀՀ պետական դրոշ՝ ծոփքերով)	հատ	20	4000	80 000	20
2(19)	պատի ժամացույցներ (ժամացույց)	հատ	450	2890	1 300 500	450

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-22-3/3-6 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ., ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 15.12.2022թ.		
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1(16)	Դրոշներ (ՀՀ պետական դրոշ՝ ծոփքերով)	35821400/503	80 000	80 000	80 000
2(19)	պատի ժամացույցներ (ժամացույց)	30199798/501	1 300 500	1 300 500	1 300 500

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են անողական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Գ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ՄԱՅՆԴ ԼԱԲ» ՍՊԸ
Տնօրեն

Ա. ԻՍԱՂՈՒԼՅԱՆ